ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՓԱԹԵԹ

12-14

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՓԱԹԵԹ

Բարի գալուստ EASST կրթական փաթեթ: Այս փաթեթը մշակված է ուսուցանելու ճանապարհային անվտանգությունն բազմաթիվ ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական համակարգերում:

Օգտագործելով օրինակը կրթական գործունեության և հանգստի ժամանակ՝ ուսուցիչներն ու ծնողները կարող են օգնել երեխաներին անվտանգ լինել ճանապարհներին:

Այս փաթեթում ներառված ճանապարհային անվտանգության հիմնական սկզբունքները կարող եք սովորեցնել երեխաներին և դեռահասներին՝ ըստ տարիքային առանձնահատկությունների:

Փաթեթում ներառված գործունեության հիմանկան սկզբունքներն են՝

- **Իրազեկել** երթևեկության և դրա վտանգների մասին
- **Կարգուկանոն պահպանել** ճանապարհներին
- **Անվտանգ ընտրություն կատարել**՝ պահպանելով Ձեր և ուրիշների անվտանգությունը:

Ինչո՞ւ ուսուցանել ճանապարհային անվտանգություն

Աշխարհում ամեն օր միջինը 500 անչափահաս է մահանում ավտոճանապարհային պատահարների պատճառով: Ճանապարհային պատահարներն ամենամեծ չարիքն են երեխաների համար աշխարհի տարբեր մասերում:

Ճանապարհային անվտանգության ուսուցանումը կենսական է նրանց համար: Երբեք շուտ չէ սովորեցնել անվտանգության հիմնական կանոնները: Ամեն տարի ավելի քան 1.2 միլիոն մարդ մահանում է ավտոճանապարհային պատահարների պատճառով կամ տասնյակ միլիոնավոր մարդիկ վիրավորվում կամ դառնում են հաշմանդամներ:

Հատկապես վտանգված են երեխաները, որովհետև՝

- հասակի առանձնահատկություններից ելնելով՝ դժվար նկատելի են վարորդների կողմից,
- վտանգավոր իրավիճակներում դժվար են կողմնորոշվում և կայացնում են սխալ որոշումներ անվտանգության վերաբերյալ,
- ֆիզիկապես նրանք ավելի փոքր են և մեծ է վնասվածքի հավանականությունը հարվածից:

Կրթությունը կարող է պաշտպանել երեխաներին՝ ուսուցանելով անվտանգության հմտություններ: Իրազեկելով դեռահասներին ռիսկերի մասին և տրամադրելով



նրանց անվտանգության ռազմավարությունը՝ կնպաստենք նրանց զարգացվածության մակարդակի աճին:

Ճանապարհային անվտանգությունը ծավալուն առարկա է, որտեղ ներգրավված են և՛ երեխաները, և՛ դեռահասները: Անգամ ամենափոքր երեխան գիտի ինչ-որ բան դրա մասին, որովհետև բոլորն էլ օգտվում են ճանապարհներից և անվտանգությունը կարող է վնասել բոլորին:

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՓԱԹԵԹ (շարունակություն)

Ծանոթություն կրթական փաթեթին

Փաթեթն ապահովում է գրավիչ և խթանող գործողություններ՝ ներկայացնելով ճանապարհային անվտանգության ուղերձներն ու վարքագծերը:

Փաթեթը բաժանված է երեք բաժնի.

- մինչև 6 տարեկաններ
- 6-11 տարեկաններ
- 12-14 տարեկաններ

Յուրաքանչյուր բաժնի թեման կազմված է թիրախային խմբին համապատասխան, բայց դրանք բոլորն էլ առընչվում են վերոնշյալ հիմնարար սկզբունքներին:

Ինչպե՞ս կիրառել կրթական փաթեթը

Յուրաքանչյուր բաժին ապահովում է տարիքին համապատասխան ռեսուրսներ, ներածության և ուսուցիչների ու լիդերների խմբերի համար խորհուրդներ:

Այս հիմնական ցուցումներն ու ռեսուրսները տալիս են ձեզ անհրաժեշտ ամբողջական տեղեկատվությունը՝ դեռահասների հետ ճանապարհային անվտանգության դասընթացը վարելու համար:

Ռեսուրսները ներառում են ուսուցիչ-լիդերների ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (դասի պլան և վարժություններ) ինչպես նաև երեխաներին բաժանվող նյութերը:

Ճանապարհային անվտանգության կրթական ծրագրի գործողությունների և բաժանվող նյութերի ձևը կարող է ներառվել դասերում կամ արտաժամյա պարապմունքներում: Մենք առաջարկում ենք ունենալ տարբեր միջոցառումներ յուրաքանչյուր շաբաթվա համար՝ ճանապարհային անվտանգության ուղերձները հնարավորինս շուտ ամրապնդելու նպատակով:

Գործողությունները և բաժանվող նյութերը կարող են կիրառվել նաև անհատապես՝ վեր հանելու ճանապարհային անվտանգության հատուկ հարցերը: Յուրաքանչյուրն առանձին վարժություն է՝ միտված անվտանգության իրազեկվածությանը բարձրացմանը:

Այս ռեսուրսներն օգտագործելիս խնդրում ենք հիշել հետևյալ կետերը.

Հիմնական ուղերձներ

Ուսուցչի ցուցումները յուրաքանչյուր բաժնում ընդգծում է տարիքային խմբին ուղղված հիմնական ուղերձները: Յուրաքանչյուր առաջադրանք նաև ներառում է **հիմնական ուղերձներ** և նպատակներ: Փորձեք անընդհատ ամրապնդել այս հիմնական ուղերձները:

Ակտիվ ուսուցում

Երեխաներն ու դեռահասները լավագույնս սովորում են, երբ **ակտիվ** են և ներգրավված: Փորձեք դարձնել դասը որքան հնարավոր է ինտերակտիվ:

Իրական կյանքի փորձ

Առաջին հերթին երեխաների և դեռահասների համար կարևոր է սովորել ճանապարհների, երթևեկության և անվտանգ վարքագծի մասին: Միշտ փորձեք ներառել **բացօթյա գործնական միջոցառումներ** ճանապարհային անվտանգության դասին:

Հասկանալի բառապաշար

Երեխաներին լիարժեքորեն ներգրավելու համար անհրաժեշտ է ծանոթ լինել համապատասխան **բառապաշարին:** Համոզվեք, որ երեխաները, ում հետ աշխատում եք, հասկանում են ձեր կիրառած պայմանները: Սա կարևոր է բոլոր տարիքային խմբերի համար՝ հատկապես դեռահասների հետ աշխատանքում:

Բազմազանություն

Այս փաթեթը կենտրոնացված է միջազգայնորեն ընդունված անվտանգության ուղերձների և վարքագծի վրա՝ պահպանելու երեխաների անվտանգությունը: Սակայն ձեր խմբի երեխաները կարող են ունենալ **տարբեր փորձեր** և անհրաժեշտություն կառաջանա համապատասխանեցնելու ձեր գործունեությունը: Օրինակ՝ շատ երեխաների ընտանիքներ չունեն մեքենաներ կամ ապրում են մայթեզր չունեցող բնակավայրում: Բացի այդ, կախված բնակության վայրից՝ գյուղական կամ քաղաքային, առաջանում են տարբեր խնդիրներ և դասընթացները պահանջում են տարբեր մոտեցումներ:

Ուշադրություն

Խմբի լիդերները պետք է ստուգեն՝ արդյոք որևէ երեխայի ընտանիքի անդամ կամ

ընկեր մասնակից եղել է ավտոճանապարհային լուրջ պատահարի:

Նմանատիպ իրավիճակներում հատուկ ուշադրություն ցուցաբերելու անհրաժեշտություն կա, և նպատակահարմար է նախապես զգուշացնել ծնողներին կամ խնամակալներին, որպեսզի նախապատրաստեն երեխաներին:

Ընդգրկել երեխաներին/ խնամակալներին

Երեխաներին սովորեցնելուց բացի անհրաժեշտ է նաև ճանապարհային անվտանգության դասընթացին ներգրավել ծնողներին: Երեխաները կարող են ազդել նրանց վարքագծի վրա: Այս փաթեթը ներառում է նամակ, որը կարող եք տալ ծնողներին, ինչը կիրազեկի, թե ինչ են սովորել երեխաները և ինչպես կարող են ամրապնդել դրանք:

12-14 տարեկաններ. Ներածական ցուցումներ

Փաթեթի այս բաժնի հիմնական ուղերձները ուսուցիչների համար.

Զգոն եղիր:

Ռիսկի մի դիմիր ճանապարհներին:

Ճանապարհային անվտանգությունը բոլորի համար է:

Խուսափիր հասակակիցների ճնշումներից:

Միշտ կապիր ամրագոտի:

Փաթեթի այս բաժինն ուսուցանում է ճանապարհային անվտանգություն 12-14 տարեկան երիտասարդներին: Տարիքային այս խմբին դժվար է ինտեգրել, քանի որ նրանք արդեն ծանոթ են անվտանգության հիմնական կանոններին և նրանց թվում է՝ անվտանգության խնդիր կարող է լինել երեխաների համար:

Այնուամենայնիվ, սա թիրախային հիմնական տարիքային խումբն է: Դեռահասներն ավելի անկախ են, քան երեխաները և մահացության կամ լուրջ վնասվածքներ ստանալու բարձր ռիսկայնություն ունեցող խմբին են պատկանում: Ճանապարհատրանսպորտային պատահարները 10-24 տարեկանների մահացության հիմնական պատճառն են:

Այս ռիսկը փոխվում է տարիքի հետ տարբեր պատճառներով: Դեռահասներն ավելի հակված են անցնել թույլատրելիի սահմանը քան երեխաները և քիչ ունակ ռիսկի դիմել, քան չափահասները: Դեռ ավելին, նրանք հակված են գերագնահատել իրենց կարողությունները և իրենց հասակակիցների կողմից ճնշման ենթարկվելով՝ ռիսկի դիմել:

Այս խմբի հետ աշխատելիս անհրաժեշտ է հստակեցնել, որ ճանապարհային անվտանգությունը նվազեցնում է մահվան և վթարների հավանականությունը և անհրաժեշտ է լրջորեն ուսումնասիրել այն:

Անհրաժեշտ է նաև համոզվել, որ ուսուցման մակարդակը բարձր է.

- Հասկանալ, թե ինչ գիտեն արդեն դեռահասները և զարգացնել նրանց գիտելիքները:
- Խրախուսել քննարկում և մասնակցություն:
- Համաձայնեցնել դեռահասների կյանքին և կենսափորձին:
- Ներառել իրական կյանքից ծրագրեր և գործնական հանձնարարություններ:
- Քննարկել՝ ինչպես ճիշտ որոշումներ կայացնել հասակակիցների ազդեցության ներքո:
- Հորդորել երիտասարդներին մտածել իրենց գործողությունների հետևանքների մասին:

European Bank for Reconstruction and Development
east Eastern Alliance for Safe and Sustainable Transport
THINK
FIA FOUNDATION
NRSC
AOA

12-14 տարեկաններ. Ներածական ցուցումներ (շարունակություն)

1. Վտանգի իրազեկում և ռիսկի ընկալում

Գործողության և բաժանվող նյութի առաջին զույգը մշակված է դեռահասների ուշադրությունը ռիսկերի վրա հրավիրելու նպատակով: Այս առաջադրանքները դրդում են դեռահասներին հաշվի առնել իրենց սեփական վարքագիծը և մտածել հնարավոր և անհնար ռիսկերի մասին:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ. «Ռիսկային վարքագիծ. խմբային քննարկումե գործողությունն օգնում է դեռահասին գիտակցել իր սեփական վարքագիծը և արտահայտել իր տեսակետը ռիսկերի վերաբերյալ:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ. «Որքան ռիսկային է» շարունակում է այս թեման՝ քննարկելով ռիսկերի մակարդակները:

ԲԱԺԱՆՎՈՂ ՆՅՈՒԹ. «Երթի պլանավորորում» և ԲԱԺԱՆՎՈՂ ՆՅՈՒԹ. «Գնահատիր քո անվտանգությունը» աշխատանքային թերթիկներ են՝ մշակված օգնելու դեռահասներին կապակցել քննարկումը իրենց ամենօրյա փորձին և կիրառել այն, ինչ սովորել են գործնականում:

2. Ճանապարհային անվտանգությունը բոլորի համար է

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ. «Ճանապարհային անվտանգության արշավը» գործողություն է դեռահասների համար՝ օգտագործելու իրենց անվտանգ վարքագծի գիտելիքները ճանապարհին և ամրապնդել հիմնական ուղերձները:

ԲԱԺԱՆՎՈՂ ՆՅՈՒԹ. «Ձեր կարծիքը» խմբային քննարկման առաջադրանք է դեռահասներին ներգրավելու նպատակով:

ԲԱԺԱՆՎՈՂ ՆՅՈՒԹ. «Պատճառը և հետևանքը» օգնում է դեռահասներին ուսումնասիրել գործողությունների հետևանքները և դրանց ազդեցությունները տարբեր տեսանկյուններից:

12-14 տարեկաններ . Ներածական ցուցումներ (շարունակություն)

3. Խուսափել ճնշումներից

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ. «Խուսափել ճնշումներից . դրամատիկ գործողությունե: Այս գործողությունը հնարավորություն է ընձեռում դրամայի միջոցով բացահայտել հասկակիցների ճնշումները, ինչպես նաև դրա ռազմավարությունը:

4. Միշտ կապիր ամրագոտին

Բաժանվող նյութ. Ամրագոտիներ: Այս թերթն ընդգրկում է ամրագոտի կապելու հիմնական ուղերձներից շատերը: Այն կարող է օգտագործվել նաև որպես թեմայի լավ ամփոփում:

5. Վարորդի վարքագիծ

Հաջորդ երկու գործողությունենրը ներառում են նաև թեմաներ՝ ուղղված սկսնակ վարորդների համար: Կարևոր է նաև բարձրացնել իրազեկվածության մակարդակը նախքան դեռահասների վարել սովորելը:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ. «Վարորդի վարքագիծըե առաջադրանք է օգնելու դեռահասներին հետազոտել և ներկայացնել կարճ աշխատանք մի շարք հարցերի վերաբերյալ:

ԳՈՐԾՈՂՈՒԹՈՒՆ. «Անվտանգ վարորդի հարցումըե գործնական առաջադրանք է հետևելու համար վարորդի վարքագծին և քննարկել բարձրացված հարցերը:

6. Եզրակացություններ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ. «Ստեղծիր երաշխիքային քարտե վերջին գործողությունն է, որը տալիս է դեռահասներին հնարավորություն ամփոփել, թե ինչ են սովորել, ինչպես նաև երաշխավորել հետագա պարտավորությունները ճանապարհային անվտանգության վերաբերյալ:

European Bank for Reconstruction and Development
east Eastern Alliance for Safe and Sustainable Transport
THINK
FIA FOUNDATION
NRSC
AOA

1. Վտանգի իրազեկում և ռիսկի ընկալում

1. 1 ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ. Ռիսկային վարքագիծ. խմբային քննարկում

Ցուցումներ ուսուցչին. սա ուսուցչին ուղղված գործողություն է: Այս ցուցումները խմբերի լիդերների համար են և նախատեսված չեն դեռահասների համար:

Պահանջվող ժամանակ. 30 րոպե:

Հիմնական ուղերձներ. իրազեկում վտանգի մասին, անվտանգ վարքագիծ ճանապարհներին և ռիսկերը դեռահասների և սկսնակ վարորդների շրջանում:

Նպատակը. օգնել դեռահասներին հաշվի առնել իրենց անփորձ լինելը և ռիսկի մակարդակը՝ ներգրավելով ամենօրյա գործողության մեջ և գնահատել հնարավոր և անհնար ռիսկերը:

Սա խմբային աշխատանք է, որը նպաստում է դեռահասների ուշադրության կենտրոնացմանը վտանգավոր վարքածի վրա և օգնում մտածել՝ ինչպիսի վարքագիծն է ճիշտ ճանապարհին՝ իրենց անվտանգ պահելու համար:

Բացատրեք խմբին, որ իրենց անփորձ լինելը նշանակում է, որ նրանք ավելի քիչ ունակ են տարբերել վտանգները և, քանի որ երիտասարդ են, հատկապես ռիսկի գործոնը մեծանում է, որ կսխալվեն:

Ըստ վիճակագրական տվյալների 25 տարեկանից ցածր մահացությունների և վթարների թվի 30%-ը կազմում են դեռահասները:

Խնդրեք Ձեր խմբի դեռահասներին աչքի անցկացնել վարքագծի հետևյալ տեսակները և նշել՝ արդյո՞ք հանդիպել են իրենց կամ իրենց ընկերների շրջանում: Կարո՞ղ է արդյոք այդ վարքագիծը ռիսկային լինել և ո՞րքան են նրանք ի զորու համակարգել իրենց վարքը անվտանգ մնալու համար:

- Ռիսկի դիմել ճանապարհներին և մտածել, որ ճանապարհային անվտանգությունը միայն փոքրիկների համար է:
- Ինքնավստահ լինել՝ մտածելով, որ խնամքի կարիք չունեք:
- Զբաղվել հեռախոսով կամ անկանջակալներով հատել փողոցը:
- Փողոցում իրարանցում առաջացնել ընկերների հետ:
- Ամրագոտի չկապել:
- Գիշերը փողոց դուրս գալ մուգ հագուստով:

European Bank for Reconstruction and Development
east Eastern Alliance for Safe and Sustainable Transport
THINK
FIA FOUNDATION
NRSC
AOA

1. 2 ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ. Որքան ռիսկային է:

Ցուցումներ ուսուցչին. սա ուսուցչին ուղղված գործողություն է: Այս ցուցումները խմբերի լիդերների համար են և նախատեսված չեն դեռահասների համար:

Պահանջվող ժամանակ. 30 րոպե:

Հիմնական ուղերձներ. Զգոն եղիր: Ռիսկի մի դիմիր:

Նպատակը. օգնել դեռահասներին հաշվի առնել ռիսկի մակարդակը՝ ներգրավելով ամենօրյա գործողության մեջ և գնահատել հնարավոր և անհնար ռիսկերը:

Տպեք և կտրեք հաջորդ էջում գրված մի քանի ուղերձ:

Բաժանեք դեռահասներին մի քանի խմբի և տվեք յուրաքանչյուր խմբին մեկ ուղերձ: Հորդորեք մտածել մի իրավիճակ և նշել, թե որքան ռիսկային է այն:

Քննարկումից հետո հանձնարարեք նրանց բաժանել իրավիճակները 3 մակարդակի:

- Ցածր ռիսկային. ես այդպես կվարվեի
- Կարող է լինել ռիսկային. վատ միտք չէ
- Շատ ռիսկային է. երբեք այդպես չեմ վարվի

Քանի որ արդեն բաժանել են ռիսկային մակարդակների, կազմակերպեք քննարկում ամբողջ խմբով:

Հարցրեք, թե ինչու են այդպես բաժանել, օգնեք հստակեցնել պատասխանները և համաձայնեցնել մյուսների կարծիքների հետ:

1. 2 Որքան ռիսկային է (Շարունակություն)

Ստուգել հեռախոսը, երբ քայլում ես փողոցով

Ուշ դուրս գալ դպրոցից

Գիշերը զբոսնել մուգ հագուստով

Վիճել ընկերների հետ կանգառում

Այգում ֆուտբոլ խաղալ

Փողոցն անցնելիս ականջակալներով երաժշտություն լսել

Խրախուսել վարորդին գերազանցել արագության սահմանը

Տուն գնալիս խաղալ մեքենայի հետևում

Ամրագոտի չկապել

European Bank for Reconstruction and Development
east Eastern Alliance for Safe and Sustainable Transport
THINK
FIA FOUNDATION
NRSC
AOA

1. 3 ԲԱԺԱՆՎՈՂ ՆՅՈՒԹ. Երթի պլանավորում[1]

Յուրաքանչյուր տարի տանից դպրոց ճանապարհը դու անցնում ես մոտ 400 անգամ: Այս առաջադրանքը կօգնի քեզ վերանայել և հաշվի առնել այն ամենը, ինչը դարձնում է այդ ճանապարհը հնարավորինս անվտանգ:

Գտիր կամ նկարիր քո դպրոցը տանող ճանապարհը:

Հետևիր նշված փուլերին հետազոտելու համար քո ճանապարհը և կիրառիր ցանկում նշվածները այն ավելի անվտանգ դարձնելու և ռիսկերը կրճատելու նպատակով:

- Թվարկիր վտանգները յուրաքանչյուր փուլում (Այն ամենը, ինչ կարող է վնասել քեզ)
- Գնահատիր յուրաքանչյուր վտանգի հավանականությունը՝ բարձր, միջին, ցածր (որքան է հավանականությունը, որ այն տեղի կունենա)
- Մտածիր՝ որքան կարող ես կրճատել վտանգի հավանականությունը և անվտանգ մնալ:

Ստորև ներկայացված է աղյուսակի օրինակ: Ուսումնասիրիր և կազմիր քո հարմարը:

Փուլերը	Վտանգները	Ռիսկերը	Ինչպե՞ս դարձնեմ ճանապարհը անվտանգ:
Քայլում ես այնպիսի ճանապարհով, որտեղ մայթեզր չկա	Վրաերթի ենթարկվել առջևից եկող մեքենայի կողմից	Միջին և բարձր	Քայլել երթևեկելի հատվածից դուրս և հագնել վառ գույնի հագուստ
Ավտոբուսի կանգառում սպասելիս կանգնել ճանապարհի վրա	Վրաերթի ենթարկվել մեքնաների կողմից	Միջին և ցածր	Զգույշ լինել: Չտարվել հեռախոսով, ընկերների հետ զրույցով և խուսափել ականջակալներից:
Ավտոբուսում	Անսպասելի արգելակման դեպքում ընկնել	Ցածր	Նստել կամ ամուր բռնվել, եթե կանգնած ես:
Իջնել ավտոբուսից և անցնել դպրոցի ճանապարհը	Վրաերթի ենթարկվել մեքենայի կողմմից	միջին	Սպասիր մինչև ավտոբուսը կանցնի: Կանգնիր, նայիր և լսիր նախքան անցնելը:

[1] Այս գործողությունը մշակված և հրապարակված է Մեծ Բրիտանիայի տրանսպորտի նախարարության կողմից. http://think.direct.gov.uk

1. 3 ԲԱԺԱՆՎՈՂ ՆՅՈՒԹ. Երթի պլանավորում (շարունակություն)

Օգտագործիր այս աղյուսակը՝ հետազոտելու համար քո ճանապարհը

Փուլերը	Վտանգները	Ռիսկերը	Ինչպե՞ս դարձնեմ ճանապարհը անվտանգ:

Բացի այդ, մտածիր, թե անսպասելի ինչեր կարող են պատահել:

- Ինչ կլինի, եթե ուշ դուրս գամ և շտապեմ:
- Ինչ կլինի, եթե բաց թողնեմ ավտոբուսը:
- Ինչ կպատահի, եթե ընկերներս վիճեն փողոցում:

1. 4 ԲԱԺԱՆՎՈՂ ՆՅՈՒԹ. Գնահատիր անվտանգությունդ

Առաջադրանքը կօգնի քեզ գնահատել քո անձնական անվտանգությունը և վարքագիծը ճանապարհներին:
Նայիր աղյուսակին և նշիր՝ որքան հաճախ ես վարվում այդպես.

	Հազվադեպ	Կանոնավոր	Միշտ
Բավարար ժամանակ հատկացնո՞ւմ ես ճանապարհ գնալիս:			
Գիշերը դուրս գալի՞ս ես վառ գույնի հագուստով:			
Ճանապարհը հատելիս օգտագործո՞ւմ ես ականջակալներ:			
Օգտվո՞ւմ ես հեռախոսներից ճանապարհին:			
Հատո՞ւմ ես ճանապարհը կայանված մեքենայի առջևով:			
Վազելո՞վ ես անցնում փողոցը:			
Ամրագոտի կապո՞ւմ ես:			

Երբ լրացնես աղյուսակը, համեմատիր այն մյուսների հետ և մտածիր՝ ինչպես կարող ես բարելավել քո անվտանգությունը:

2. Ճանապարհային անվտանգությունը բոլորի համար է

2. 1 ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ. Ճանապարհային անվտանգության արշավ

Ցուցումներ ուսուցչին. սա ուսուցչին ուղղված գործողություն է: Այս ցուցումները խմբերի լիդերների համար են և նախատեսված չեն դեռահասների համար:

Պահանջվող ժամանակ. 1-2 ժամ:

Հիմնական ուղերձներ. կանգնիր, նայիր և լսիր: Երեխաները պետք է բռնեն մեծահասակների ձեռքը: Վառ հագուստ կրիր: Միշտ կապիր ամրագոտին:

Նպատակը. օգնել դեռահասներին մտածել ճանապարհային անվտանգության հիմնական ուղերձների մասին:

Դեռահասներին խնդրեք ճանապարհային անվտանգության ապահովման արշավ կազմակերպել երեխաների համար: Խոսեք նրանց հետ արշավի մասին և բացատրեք, թե ինչպես պետք է այն ներկայացնել: Արշավի նյութ կարող են լինել հետևյալ ուղերձները.

- Կանգնիր, նայիր և լսիր
- Բռնիր մեծահասկաների ձեռքը
- Վառ հագուստ կրիր
- Միշտ կապիր ամրագոտի:

Եթե արդեն դեռահասները ընտրել են թեման, թույլ տվեք աշխատեն ինքնուրույն կամ փոքր խմբերով արշավին նախապատրաստվելու համար: Նրանք կարող են օգտագործել՝

- ցուցատախտակներ
- խաղեր կամ պատմություններ
- թռուցիկներ
- տեսանյութեր կամ նորություններ (կախված աղբյուրներից):

Վստահ եղեք, որ դեռահասները կարող են հասցնել նյութը լսողներին և պահել հիմնական ուղերձը նյութի ամբողջ ընթացքում: Նրանց բավականաչափ ժամանակ տվեք լավագույնս պատրաստվելու համար:

2. 2 ԲԱԺԱՆՎՈՂ ՆՅՈՒԹ. Ձեր կարծիքը[2]

Ստորև մեջբերումներ են դեռահասների՝ ճանապարհային անվտանգության վերաբերմունքի մասին:

Փոքր խմբերով քննարկեք տեսակետները: Դրանք ճի՞շտ են: Համաձա՞յն եք, թե՞ ոչ: Ինչո՞ւ:

Մեծերը միշտ ասում են, որ ճանապարհները վտանգավոր են և ասում են, թե ինչպես պետք է անցնեմ փողոցը, բայց միշտ իրենք անցնում են: Ինչո՞ւ պետք է ես անհանգստանամ իսկ նրանք՝ ոչ:

Իմ ընկերները վիճում էին մեքենաների առաջ: Ես գիտեմ, որ հիմարություն է, բայց չցանկացա վախկոտ երևալ և միացա նրանց:

Մենք ուսումնասիրել ենք ճանապարհային անվտանգություն ցածր դասարաններում: Բայց հիմա դրա կարիքը չկա: Իմ ընկերներից ոչ ոք վթարի չի ենթարկվել և ես էլ անհանգստանալու կարիք չունեմ:

Անհնար է անվտանգ լինել:

[2] Այս գործողությունը մշակված և հրապարակված է Մեծ Բրիտանիայի տրանսպորտի նախարարության կողմից. http://think.direct.gov.uk

2. 2 Ձեր կարծիքը (շարունակություն)

Ես գիտեմ անվտանգության կանոնները, բայց իրական կյանքում միշտ չեմ հիշում դրանք: Երբ դպրոցից ուշանում եմ, միայն մտածում եմ այնտեղ շուտ հասնելու մասին:

Ճանապարհային անվտանգությունը այն չէ, ինչ մենք մտածում ենք: Դրանք ինձ չեն վախեցնում:

Չեմ կարծում՝ հնարավոր է կանխատեսել, թե ինչ կլինի հետո կամ անհանգստանալ դրա համար: Ինչ լինելու է, կլինի: Միգուցե հայտնվել ես սխալ տեղում սխալ ժամանակ:

Երբ նստում եմ մեքենայի հետևի նստատեղին, սովորություն չունեմ ամրագոտի կապել: Դրանք շատ անհարմար են, և ես արդեն մեծ եմ այն կապելու համար: Սակայն, երբ տեսա թո ինչ հետևանքներ կարող է ունենալ չկապելը, դա ինձ իրոք մտածելու տեղիք տվեց:

European Bank for Reconstruction and Development
east Eastern Alliance for Safe and Sustainable Transport
THINK
FIA FOUNDATION
NRSC
AOA

2. 3 ԲԱԺԱՆՎՈՂ ՆՅՈՒԹ. Պատճառ և ազդեցություն[3]

Ստորև ներկայացված նյութը նկարագրում է ճանապարատրանսպորտային մի պատահար, որում ներգրավված է Տիգրան անունով տասներեքամյա մի տղա: Կարդացեք նրա պատմությունը և օգտագործեք տեղեկատվությունը պատահարը դիտարկելու՝ ներգրավված անձանց տեսանկյունից:

ՎԹԱՐ ՏԻԳՐԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Երկուշաբթի առավոտ էր և տասներեքամյա Տիգրանը շտապում էր դպրոց: Նա ուշանում էր, երբ իր ընկեր Վարդանից հաղորդագրություն ստացավ, որտեղ ասվում էր, որ նա արդեն դպրոցում է: Վարդանը ցանկանում էր, որ Տիգրանը որքան հնարավոր է շուտ հասներ դպրոց, որպեսզի մինչ դասերի սկսելը ֆուտբոլ խաղային: Տիգրանը նկատեց փողոցով անցնող ավտոբուսը: Նա շտապեց անցնել փողոցը՝ հասնելու կանգառ: Նրան հարվածեց մի մեքենա, որի ղեկին երիտասարդ կին էր, հետևի նստատեղին՝ երեխան:

Տիգրանը չէր տեսել մեքենան և վարորդը արգելակելու ժամանակ չուներ: Տիգրանին տարան հիվանդանոց գլխի և ոտքի վնասվածքով, որի բուժման համար ամիսներ էր անհրաժեշտ: Բախումից հետո երկար ժամանակ էր անհրաժեշտ վերականգնվելու համար: Երբ նա սկսեց վերականգնվել, նա իր ժամանակի մեծ մասն անցկացնում էր բաց թողնված դասերը լրացնելու համար: Նա բաց թողեց տարեվերջյան էքսկուրսիան և չկարողացավ ժամանակ անցկացնել ընկերների հետ:

Կարդացեք մասնակիցների կողմից արված մեկնաբանությունները: Մտածեք՝ յուրաքանչյուրն ինչպես իրեն կզգար, հետևանքները նրանցից յուրաքանչյուրի համար, և ինչպես պատահարը ազդեց նրանց կյանքի վրա:

Տիգրան

«Ես արդեն ուշացել էի: Հետո Վարդանը գրեց ինձ, որ արդեն դպրոցում է և ցանկանում է ֆուտբոլ խաղալ: Տեսա, որ ավտոբուսը արդեն հասնում էր կանգառ, ուստի վազեցի՝ հասնելու դրան: Դրանից հետո ինչ հիշում եմ՝ հիվանդանոցի ճանապարհին էի: Ամիսներ էր ես անշարժ էի:»

[3] Այս գործողությունը մշակված և հրապարակված է Մեծ Բրիտանիայի տրանսպորտի նախարարության կողմից. http://think.direct.gov.uk

2. 3 ԲԱԺԱՆՎՈՂ ՆՅՈՒԹ. Պատճառ և ազդեցություն (շարունակություն)

Ինչպես վթարն անդրադաձավ նրա վրա: Դիտարկենք՝

- Տիգրանի ֆիզիկական վնասվածքները
- Այն. ինչ չկարողացավ անել ապաքինման ընթացքում
- Դպրոցում բաց թողնված դասերը
- Ինչպես վթարը կանդրադառնա նրա վարքագծի վրա հետագայում
- Տիգրանի հարաբերությունները իր ընկերների հետ

Վարդան

«Ես արդեն դպրոցում էի և ձանձրացել էի: Տիգրանը խոստացել էր շուտ գալ և դասերից առաջ ֆուտբոլ խաղալ: Տիգրանը ուշանում էր և ես գրեցի նրան, որպեսզի շտապի: Իսկապես ուզում էի խաղալ: Ուրախ եմ, որ չի մահացել:»

Ինչպես վթարն անդրադաձավ նրա վրա: Դիտարկենք՝

- Արդյոք Վարդանն իրեն պատասխանատու է համարում:
- Ինչպես այն կանդրադառնա իրենց ընկերության վրա:
- Ինչ են Տիգրանի ընկերները մտածում Վարդանի մասին:
- Ինչպես վթարը կանդրադառնա նրա վարքագծի վրա հետագայում:

Տիգրանի մայրիկ

«Տիգրանին հարվածել են, երբ նա շտապել է դպրոց: Ես միշտ նրան ասել եմ ուշադիր լինել ճանապարհներին: Նրա բախտը բերել է, որ մեքենան արագ չի ընթացել: Նա վնասել է ծունկը և գլուխը: Նա երկար ժամանակ հետ մնաց դպրոցից:ե

Ինչպես վթարն անդրադաձավ նրա վրա: Դիտարկենք՝

- Արդյոք նա մեղադրում է իրեն պատահարի համար:
- Թե նա ինչ թույլ կտա Տիգրանին անել ապագայում:
- Ինչպես նա կվերաբերի Տիգրանին, երբ միայնակ դուրս գա:
- Ինչպես իրեն զգաց, երբ զանգ ստացավ հիվանդանոցից և տեսավ նրան այնտեղ:

(շարունակություն)

Վարորդ

«Ահավոր էր: Տղան հայտնվեց իմ դիմաց: Չկարողացա արգելակել և հարվածեցի: Ես երգում էի երեխայիս համար, ուստի հնարավոր է՝ փոքր-ինչ շեղվել էի: Բայց չեմ կարծում դա էր պատճառը: Այնուամենայնիվ, երբեք չես կարող վստահ լինել: Անընդհատ վերլուծում եմ այն իմ մտքում:ե

Ինչպես վթարն անդրադաձավ նրա վրա: Դիտարկենք՝

- Արդյոք նա իրեն մասամբ մեղավոր է զգում Տիգրանի հետ կատարվածի համար:
- Ժամանակն ու միջոցները, որ կպահանջվեն մեքենան վերանորոգելու համար:
- Ինչ կմտածեն ընկերներն ու ընտանիքը իր վարորդական հմտությունների մասին:

Ոստիկան

«Երեխաների մասնակցությամբ այսպիսի վթարների ես հաճախ եմ հանդիպում: Այս տղան հաջողակ է: Մի փոքր արագություն և նա հավանաբար կմահանար:ե

Ինչպես վթարն անդրադաձավ նրա վրա: Դիտարկենք՝

- Ինչպե՞ս է նա դիտարկում երեխաներին, ովքեր օգտվում են ճանապարհներից:
- Ի՞նչ է նա զգում դեպքի վայր ժամանելիս:
- Ի՞նչ էր զգում, երբ ստիպված էր Տիգրանի մայրիկին հայտնել վթարի մասին:
- Ինչպե՞ս վթարը կանդրադառնա իր վրա
- Ինչպե՞ս կվերաբերի նա իր երեխաներին:

3. Խուսափել ճնշումներից

3. 1 ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ. Խուսափել ճնշումներից. դրամատիկ գործողություն[4]

Ցուցումներ ուսուցչին. սա ուսուցչին ուղղված գործողություն է: Այս ցուցումները խմբերի լիդերների համար են և նախատեսված չեն դեռահասների համար:

Պահանջվող ժամանակ. 1 ժամ:

Հիմնական ուղերձներ. մի հանձնվիր հասակակիցների ճնշումներից:

Նպատակը. դրամայի միջոցով բացահայտել հասակակիցների ճնշումները, ինչպես նաև դրա ռազմավարությունը:

Առաջադրանքը ներառում է դեռահասների մասնակցությամբ կարճ ներկայացում, ընդամենը 3 կամ 5 րոպե տևողությամբ: Եթե խումբը մեծ է, կարող եք այն բաժանել 5 կամ 6 հոգանոց խմբերի:

Կարճ ներկայացրեք մասնակիցներին, որ նրանք պետք է պատրաստեն մի ներկայացում, որտեղ հստակ լինի հասակակիցների ճնշումները ճանապարհային անվտանգության հարցերի առնչությամբ: Պատմությունը պետք է հագեցած լինի ռիսկերի օրինակներով, վտանգավոր վարքագծով և ճնշման ներքո հասակակցիների մասնակցությամբ:

Հավաստիացեք, որ բոլորը հասկացել են առաջադրանքի էությունը: Հնարավոր է քննարկել մի քանի օրինակներ աշխատանքը սկսելուց առաջ:

Յուրաքանչյուր պատմություն պետք է ընդգրկի՝

- ճանապարհային անվտանգության կարևոր ուղերձ,
- ռազմավարություններ ճնշումներից խուսափելու համար և ինչպես խուսափել վտանգավոր վարքագծում ներգրավված լինելուց:
- հասակակիցների ճնշումների հետևանքներից:

Տվեք նրանց 15-20 րոպե իրենց պատմությունը պատրաստելու և այն փորձելու համար: Այս ընթացքում ուսուցիչները պետք է շրջեն շարքերում՝ տեսնելու, թե արդյոք աշակերտներն աշխատում են առաջադրանքի վրա: Ավարտելուց հետո յուրաքանչյուր խումբ պետք է ներկայացնի իր աշխատանքը:

[4] Այս գործողությունը մշակված և հրապարակված է Մեծ Բրիտանիայի West Yorkshire Fire Service- ի կողմից. www.westyorksfire.gov.uk

3. 1 ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ. Խուսափել ճնշումներից. դրամատիկ գործողություն (շարունակություն)

Ամեն ներկայացումը դիտելուց հետո անհրաժեշտ է քննարկել հետևյալ կետերը.

- Ո՞րն էր առաջացած խնդրի պատճառը:
- Հասակակիցների ճնշման ո՞ր ձևն էր ներկայացված:
- Ընկերությունը վնասվե՞ց:
- Արդյո՞ք կային մարդկանց կամ գույքի վնասներ: Ինչպե՞ս սա անդրադարձավ յուրաքանչյուրի վրա:
- Ո՞րն էր հերոսների վարքագծի տարբերությունները:

4. Միշտ կապիր ամրագոտին

4. 1 ԲԱԺԱՆՎՈՂ ՆՅՈՒԹ. Ամրագոտիներ[5]

Ամրագոտիները փրկում են կյանքեր. ճանապարհային անվտանգության պատմությունում օրինակները շատ են, երբ ամրագոտու շնորհիվ փրկվել են մարդիկ: Կա դեռ արդարացում ամրագոտի չկապելու համար: Ահա դրանցից մի քանիսը և թե ինչու դրանք ճիշտ չեն:

Ես միայն պտտվում եմ և իսկապես դանդաղ եմ վարում:	Վթարների մեծ մասը եղել են տանից 4կմ հեռավորության վրա և 60կմ/ժ արագությամբ:
Ամրագոտիները անհարմար են:	Դրանք կարող են սկզբում լինել անհարմար, բայց հետո կսովորեք:
Ես նստում եմ հետևի նստատեղին, միայն առջևում նստածները պետք է կապեն ամրագոտի	Եթե հետևի նստատեղին նստած ուղևորը չկապի ամրագոտի,ապա վթարի ժամանակ կարող է նետվել առջև կամ հարվածի այլ ուղևորի
Եթե վթար լինի, մեքենան այրվի կամ ընկնի ջուրը, ամրագոտին ինձ կխանգարի:	Վթարի այս տեսակները կազմում են ընդամենը 1% բոլոր վթարներից: Բացի այդ, առանց ամրագոտու դուք կարող եք մահանալ մինչև մեքենայի այրվելը կամ ջուրն ընկնելը:
Վթարի ժամանակ ամրագոտին կարող է վնասել ինձ	Ոչ այնքան, որքան դուք կվնասվեք առանց դրա: Առանց ամրագոտու կարող եք դուրս թռչել մեքենայից և 75% հավանականությամբ կմահանաք: Սակայն ամրագոտիները համարյա թե վնասվածքների պատճառ չեն դառնում:

[5] Այս գործողությունը մշակված և հրապարակված է YOURS / Youth for Road Safety-ի կողմից. www.youthforroadsafety.org

5. Վարորդի վարքագիծ

5. 1 ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ. Վարորդի վարքագիծ

Ցուցումներ ուսուցչին. սա ուսուցչին ուղղված գործողություն է: Այս ցուցումները խմբերի լիդերների համար են և նախատեսված չեն դեռահասների համար:

Պահանջվող ժամանակ. 1ժամ:

Հիմնական ուղերձներ. միշտ կապիր ամրագոտին: Երբեք մի օգտվիր հեռախոսից վարելիս: Մի խմիր և վարիր: Արագությունը մի գերազանցիր:

Նպատակը. օգնել դեռահասներին հետազոտել և հասկանալ վարորդների առընչվող մի շարք հարցեր:

Դեռահասներին բաժանեք խմբերի և խնդրեք նրանց ուսումնասիրել վարորդների վարքագծին առնչվող նյութը: Այս առաջադրանքի համար ինտերնետի հասանելություն է հարկավոր: Խնդրեք յուրաքանչյուր խմբի պատրաստել 2 րոպե տևողությամբ ներկայացում: Շատ լավ կլինի, եթե ունենաք 4 խմբեր հետևյալ բոլոր թեմաներն ընգրկելու համար:

- Ոչ սթափ վիճակ. ալկոհոլ, թմրանյութեր, հոգնածություն
- Ամրագոտի
- Արագություն
- Անուշադրություն. ուտել կամ խոսել վարելու ընթացքում

Հնարավոր է անհրաժեշտ լինի հաշվի առնել այս փաստերը.

- Ո՞րն է Ձեր երկրում գործող օրենքը: Կարիք կա՞ այն ամրապնդելու:
- Ճանապարհատրանսպորտային պատահարների վիճակագրություն:
- Ճանապարհային անվտանգությանն ուղղված արշավներ:
- Ինչպե՞ս երիտասարդները կարող են ազդել իրավիճակի վրա:

Եթե խումբը պատրաստ է, խնդրեք նրանց ներկայացնել այն մյուսներին:

5. 2 ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ. Անվտանգ վարորդի հարցում

Ցուցումներ ուսուցչին. սա ուսուցչին ուղղված գործողություն է: Այս ցուցումները խմբերի լիդերների համար են և նախատեսված չեն դեռահասների համար:

Պահանջվող ժամանակ. 1ժամ:

Հիմնական ուղերձներ. միշտ կապիր ամրագոտին: Երբեք մի օգտվիր հեռախոսից վարելիս: Մի խմիր և վարիր: Արագությունը մի գերազանցիր:

Նպատակը. օգնել դեռահասներին հետազոտել և հասկանալ վարորդների առընչվող մի շարք հարցեր, մտածել վարորդների անվտանգ և վտանգավոր վարքագծի մասին:

Գործողությունը ներառում է դեռահասների փոքր խմբերի գործնական դաս (20րոպե տևողությամբ) տեղի խաչմերուկներում, որի ընթացքում նրանք կտեսնեն վարորդի անվտանգ և վտանգավոր վարքագծի տարբերությունները: Կարևոր է՝ նրանք ծանոթ լինեն վարելու անվտանգությանը նախքան վարել սովորելը:

Ընտրեք մի ճանապարհ կամ խաչմերուկ, որտեղ կարոն են դեռահասները կանգնել և որտեղ երթևեկությունը կայուն է:

Մինչև դուրս գալը խոսեք այն մասին, թե ինչ կարող են նրանք տեսնել և առաջարկեք ուշադիր լինել վտանգավոր վարքագծի հետևյալ կերպերի վրա.

- Առանց ամրագոտու վարորդներ
- Առանց ամրագոտու ուղևորներ
- Հեռախոսով զբաղվող վարորդներ
- Այլ, օրինակ՝ խաչմերուկներում չարգելակող, սխալ գծով ընթացող, արագությունը գերազանցող

Շատ լավ կլինի կենտրոնանալ մեկ կամ երկու կետերի վրա: Խումբը պետք է մշակի մի զուգահեռ թերթ, որպեսզի հետազոտության իրականացման ընթացքում գրանցի տվյալները:

5. 2 Անվտանգ վարորդի հարցում (շարունակություն)

Հետազոտությունից հետո

Խումբը կամ խմբերը հավաքեք մեկտեղ և հրավիրեք պատմելու, թե ինչ են հայտնաբերել: Նրանք պետք է վերլուծեն տվյալները, օրինակ՝ վարորդների քանի տոկոսն էր առանց մարագոտի, քանիսն էին ամրագոտիով: Կարող եք օգնել նրանց ներկայացնել հետազոտությունը գծապատկեներով:

Նախագծի հետքերով

Գործողությունից հետո կարող եք հորդորել նրանց կազմակերպել ճանապարհային անվտանգության արշավ՝ խրախուսել վարորդներին կապել ամրագոտի կամ չխոսել հեռախոսով երթևեկելիս:

6. Եզրակացություններ

6. 1 ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ. Ստեղծեք երաշխիքային քարտ

Ցուցումներ ուսուցչին. սա ուսուցչին ուղղված գործողություն է: Այս ցուցումները խմբերի լիդերների համար են և նախատեսված չեն դեռահասների համար:

Պահանջվող ժամանակ. 45 րոպե:

Հիմնական ուղերձներ. միշտ կապիր ամրագոտին: Երբեք մի օգտվիր հեռախոսից վարելիս: Մի խմիր և վարիր: Արագությունը մի գերազանցիր:

Նպատակը. օգնել դեռահասներին հաշվի առնել ճանապարհային անվտանգության հիմնական ուղերձները և հասկանալ՝ ինչպես կանդրադառնա նրանց վարքագիծը իրենց անվտանգության վրա:

Սա խմբային գործողություն է ճանապարհային անվտանգության երաշխիքային քարտ ստեղծելու նպատակով: Հիմնական միտքը կայանում է նրանում, որ ամբողջ խումբը պետք է քննարկի ճանապարհային անվտանգության հիմնական կանոնները և կազմի երաշխիքային քարտ:

Թույլ տվեք խումբը ներկայացնի կանոների ու երաշխիքների իր ցուցակը, որը պետք է բաղկացած լինի 5-8 կետերից:

Վերջացնելուն պես նրանք պետք է մշակեն անհատական քարտի տեսք կամ խմբայյին պաստառ:

Ահա քարտի մեկ օրինակ.

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՔԱՐՏ

6

երաշխիքներ

- Կանգնիր, նայիր և լսիր
- Ամրագոտի կապիր
- Խառնաշփոթություն մի ստեղծիր ճանապարհներին
- Մի օգտագործիր հեռախոսից ճանապարհը հատելիս
- Մի շեղիր վարորդին
- Կրիր վառ գույներով հագուստ

European Bank for Reconstruction and Development
east Eastern Alliance for Safe and Sustainable Transport
THINK
FIA FOUNDATION
NRSC
AOA

Հարգելի՛ ծնող,

Ձեր երեխան սովորեց ճանապարհային անվտանգության մասին, որը միտված է նվազեցնելու զոհերի թիվը:

Երեխաները մասնակցել են մի շարք գործողությունների, այդ թվում՝ խաղերի, ստեղծագործական առաջադրանքների, քննարկումների և գործնական պարապմունքների:

Այս ամենը սովորեցրել է նրանց պահպանել անվտանգության կանոնները ճանապարհներին՝ կենտրոնացնելով հետևյալ հիմնական ուղերձների վրա.

Ձգոն եղիր:

Ռիսկի մի դիմիր ճանապարհներին:

Ճանապաևհային անվտանգությունը բոլորի համար է:

Խուսափիր հասակակիցների ճնշումներից:

Միշտ կապիր ամրագոտի

Խնդրում ենք խոսել նրանց հետ այն մասին, թե ինչ են արել այսօր: Վստահ ենք՝ կպատմեն Ձեզ իրենց սովորածի մասին:

Երեխաները լավագույնն են սովորել գործնական պարապմունքների ընթացքում, այնպես որ Դուք կարող եք կենսական նշանակություն ունենալ նրանց անվտանգության պահպանման հարցում՝ խոսելով նրանց հետ այս հարցերի շուրջ որտեղ էլ որ լինեք: Խնդրում ենք օգտվել հնարավորությունից և հիշեցրեք այս անվտանգության կանոնները: Որպես ծնող լավ օրինակ եղեք նրանց համար:

Խնդրում ենք Ձեզ և Ձեր երեխաներին զերծ պահել վտանգավոր իրավիճակներից և պահպանել անվտանգության յուրաքանչյուր կանոն:

Շնորհակալություն աջակցության համար:

Ճանապարհային անվտանգության ազգային խորհուրդ

European Bank for Reconstruction and Development
east Eastern Alliance for Safe and Sustainable Transport
THINK
FIA FOUNDATION
NRSC

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔԵՐ

Brake, The Road Safety Charity
www.brake.org.uk
www.roadsafetyweek.org

The European Bank for Reconstruction and Development
www.ebrd.com

FIA Foundation
www.fiafoundation.org

UK Department of Transport, Think! Campaign
think.direct.gov.uk

Youth for Road Safety
www.youthforroadsafety.org

National Road Safety Council
www.roadsafety.am

Automobile Club of Armenia
www.aca.am